ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԽՈՐՀՐԴԻՆ

1943 թվի նոյեմբերին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահությունը կազմակերպել էր Գիտական պրոպագանդայի խորհուրդ՝ աշխատավորների մեջ գիտելիքները լայնորեն և բազմակողմանիորեն մասսայականացնելու և գիտական նվաճումները պրոպագանդայի ենթարկելու համար։ Անցած ժամանակաշրջանում խորհուրդը զգալի աշխատանք է կատարել։ Օրերս Ակադեմիայի Նախագահությունը լսեց Խորհրդի 1945 թվի գործունեության հաշվետվությունը։

Գիտական պրոպագանդայի խորհրդի նախագահ, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ ընկ. Ս. Կարապետյանը Հայաստանի Հեռագրական գործակալության թղթակցի հետ զրույցի ժամանակ հաղորդեց.

— Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գիտական պրոպագանդայի խորհուրդը անցյալ տարի և ընթացիկ տարվա առաջին կեսին մեծ և բեղմնավոր աշխատանք է ծավալել բանվորների, կոլխոզնիկների և ինտելիգենցիայի մեջ։

Երևանում, Լենինականում, ինչպես և ռեսպուբլիկայի շրջաններում (Կիրովական, Նոր Բայազետ, Էջմիածին, Աշտարակ, Սևան, Թալին, Բասարգեչար, Ստեփանավան, Եռամշադին, Ղափան, Ալավերդի և այլն) կարդացվել է ավելի քան 750 դասախոսություն բնագիտական և հումանիտար գիտություններից։ Դասախոսությունների ընթերցմանը ներգրավվել են որակյալ գիտական աշխատողներ, այդ թվում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 13 իսկական անդամ և թղթակից-անդամ, ավելի քան 30 դոկտոր, պրոֆեսոր և գիտությունների մի քանի թեկնածու։

Այդ դասախոսությունները լսել է մոտ 109 հազար մարդ։

Դասախոսություններ են կարդացվել գիտության զանազան ճյուղերից։

Բնագիտության և տեխնիկական գիտությունների բնագավառում գլխավոր ուշադրությունը նվիրվել է քիմիայի, ֆիզիկայի, երկրաբանության, աստղաբաշխության, էներգետիկայի, մաթեմատիկայի, բիոլոգիայի, գյուղատնտեսության և այլ հարցերին։

Հումանիտար գիտությունների բնագավառում դասախոսություններ են կազմակերպվել հայ ժողովրդի պատմության, գրականության ու լեզվի, արվեստի, ինչպես նաև էկոնոմիկայի, աշխարհագրության և այլ հարցերի շուրջը։

Մեծ ժողովրդականություն էր վայելում լեկտորիումը, որը Գիտությունների Ակադեմիայի հետ կապեց մեր մայրաքաղաքի աշխատավորների լայն խավերը։ Կազմակերպվեց դասախոսությունների սերիական ցիկլ պատմության, բնագիտության պատմության, նյութական կուլտուրայի պատմության, ինչպես նաև գրականության ու լեզվի մասին։ Հատուկ ուշադրություն դրավեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Վ. Համբարձումյանի «Իսահակ Նյուտոնը», Ս. Կարապետյանի «Մարդու ծագման էվոլուցիոն ուսմունքը», Վ. Գուլքանյանի «Ռուս մեծ դարվինիստ Տիմիրյազևը», Կ. Պաֆֆենգոլցի «Մեր մոլորակի պատմությունը», բիոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Բաղդիկյանի «Դարվինը և նրա ուսմունքը», ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Ն. Քոչարյանի «Ատոմային էներգիայի օգտագործումը», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Լ. Հովհաննիսյանի «Հայաստանի միջին դարերի գիտնական բժիշկները», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանի «Հայ լեզվի ծագումը», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ի. Եղիազարովի «Սևան—Զանգի—Արաքս պրոբլեմը», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Տերտերյանի «Լուսավորությունը Հայաստանում և Խ. Աբովյանը», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Ղամբարյանի «Մենդելևը և ժամանակակից քիմիան», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիոտրովսկու «Հայ ժողովրդի ծագումը» և այլ դասախոսություններ։ Կարելի է նշել նաև պրոֆեսոր Ե. Տեր-Մինասյանի «Ոսկեդարի գրականությունը», պրոֆեսոր Ա. Ղարիբյանի «Հայ բարբառները և նրանց դասակարգումը», ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Զարյանի «Սովետահայ պատմական վեպը» (Ստ. Զորյանի «Պապ թագավորը»), ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Սևակի «Հայ լեզվի զարգացման սովետական էտապը», պատմական գիտությունների թեկնածու Մ. Ներսիսյանի «Հայ ազատագրական շարժումը 19-րդ դարի երկրորդ կեսում» և այլն։

Գիտական պրոպագանդայի խորհուրդը ռեսպուբլիկական քերթերում, զորամասերի թերթերում և ժուռնալներում սիստեմատիկաբար զետեղել է գիտնականների գիտա-պոպուլյար հոդվածները։ Հրապարակվել է 100 այդպիսի հոդված։ Բացի դրանից, կազմակերպվել է ավելի քան 30 ռադիոելույթ հետևյալ թեմաներով՝ «Կյանքի ծագումը», «Մարդու ծագումը», «Դարվինիզմ և մարքսիզմ», «Ներատոմային էներգիան», «Կոսմիկական ճառագայթներ», «Տիեզերքի ծագումը», «Արևի և լուսնի խավարումը», «Ի՞նչ բան է էլեկտրականությունը», «Ռուս մեծ գիտնական Լոմոնոսովը», «Տիմիրյազևի մասին», «Միչուրինի մասին» և այլն։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության որոշմամբ, գիտական նվաճումներն է՛լ ավելի մասսայականացնելու նպատակով, հրատարակվում են ընթերցված լավագույն դասախոսությունները։ Արդեն լույս են տեսել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Վ. Համբարձումյանի «Տիեզերքի կառուցվածքը», պրոֆ. Տեր-Մինասյանի «Ոսկեդարի գրականությունը», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Զայլախյանի «Տիմիրյազևը որպես դարվինիզմի համար մարտնչող» գիտական հանրամատչելի բրոշյուրները։ Ամենամոտ ժամանակներս լույս է տեսնելու գիտական հանրամատչելի 6 բրոշյուր ևս։ Նրանց մի մասը հրատարակվում է հայերեն և ռուսերեն լեզուներով։ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կինոֆիկացիայի վարչության հետ միասին, նախատեսված է արտադրել մի շարք հանրամատչելի գիտա-տեխնիկական կինոֆիլմեր։

Ընթացիկ տարվա թեմատիկայում հատուկ ուշադրություն է նվիրված ստալինյան չորրորդ հնգամյա պլանի մասսայականացման հարցերին, ինչպես նաև ֆիզիկո-մաթեմատիկական, տեխնիկական գիտությունների և բնագիտությանը նվիրված թեմատիկային։

Գիտությունների Ակադեմիայի Նախագահությունը նշեց 1945 թվի ընթացքում Գիտական պրոպագանդայի խորհրդի կատարած դրական աշխատանքը և հավանություն տվեց 1946 թվի աշխատանքի պլանին։ Միաժամանակ Նախագահությունը շնորհակալություն հայտնեց այն գիտական աշխատողներին, որոնք աչքի են ընկել գիտական պրոպագանդայի ասպարեզում և գիտելիքները բնակչության մեջ մասսայականացնելու բնագավառում։ Շնորհակալություն է հայտնվել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Վ. Համբարձումյանին, դոկտոր պրոֆ. Ա. Ղարիբյանին, բիոլոգիական գիտությունների դոկտոր Ա. Փանոսյանին, գիտությունների թեկնածուներ՝ Հ. Բաղդիկյանին, Ն. Քոչարյանին, Ա. Դեմյոխինին, Մ. Ներսիսյանին, Մ. Լերեդևին, Հ. Ասլանյանին, Ի. Ստեփանյանին, Ա. Պողոսյանին, գիտական աշխատակիցներ՝ Գ. Բաղալյանին, Մ. Զուրաբյանին, Ա. Ռեզիկյանին և ուրիշներին։

(ՀՀԳ)

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՕԺԱՆԴԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Անցյալ տարի Ալավերդու Պղնձաձուլական գործարանի օժանդակ տնտեսությունը ցածր բերք ստացավ։ Մի շարք կուլտուրաների բերքն ավելի քիչ էր, քան ցանված սերմացուն։ Պատճառն այն էր, որ գործարանի բանմատակարարման բաժինը և օժանդակ տնտեսության ղեկավարները չզբաղվեցին ցանքերի մշակության հարցով։

Բանմատակարարման բաժինը, որը մեծ գումարներ էր հատկացրել սերմացուն ձեռք բերելու, ցանքի և հողի մշակման համար, չկարողացավ ծածկել ծախսերը։ Այդ հանգամանքը որոշ չափով աղդեց բանվորների սննդի որակի վրա։ Ճաշարանի համար մի շարք սննդամթերքներ ձեռք բերվեցին շուկայից, որի պատճառով բարձրացան ճաշերի գները։

Գրեթե նույնը կատարվեց նաև Քիմիական գործարանում։

Թվում էր, որ այս տարի հաշվի կառնեն անցյալ տարվա սխալները և հաջող կկազմակերպեն օժանդակ տնտեսությունների ցանքը։ Սակայն օժանդակ տնտեսության հարցը Պղնձաձուլական գործարանում դարձել է վնճի առարկա։ Այդ վնճի պատճառով գործարանի օժանդակ տնտեսության ցանքը կատարվեց բավական ուշացումով, իսկ այժմ ցանքերի մշակում չի կատարվում։ Մինչև հիմա Պղնձաձուլական և Քիմիական գործարանների ճաշարաններում, խանութներում և բուֆետներում կանաչեղեն չի երևում։

Օժանդակ տնտեսության ցանքերը լավ չեն մշակվում նաև Շամլուղում։

Ալավերդու շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների տնտեսական ղեկավարներն ու պրոֆմիութենական կազմակերպությունները առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն օժանդակ տնտեսությունների ցանքերի մշակության, նրանց բերքատվությունը բարձրացնելու հարցերին։

Ս. ՎԱՆԵՍՅԱՆ